342:8
Հ-11
Հ-11

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ԳԻՐՔ № 2

ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ԿՈՉԸ ՅԵՎ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՅԵՐԵՎԱՆ 1928 Թ.

01 MAR 2010

ՀԱԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ԿՈՉԸ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈԼՈՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ

ԸՆԿԵՐՆԵՐ,

Պրոլետարական դիկտատուրայի պայմաններում խորհուրդների վերընտրությունները այն ամենախոշոր ու ամենավճռական քաղաքական ակտն են, որ կոչված են կատարելու մեր բանվորներն ու գյուղացիները, նրանց հետ միասին նաև մեր յերկրի բնակչության բոլոր մյուս աշխատավոր տարրերը: Խորհուրդը մեր կարգերում իշխանության մարմինն է, պրոլետարական իշխանության վոգչ շենքի սկզբնական բջիջը, նրա հիմքն է: Գյուղի և քաղաքի խորհուրդները վերընտրելով, մեր բանվորն ու գյուղացին դրանով արդեն վորոշում են, թե մինչև հաջորդ վերընտրությունները ո՞վ և ի՞նչպես է տնօրինելու մեր յերկրի վիճակը, ո՞վ և ի՞նչպես է վարելու մեր սոցիալիստական շինարարությունը, ո՞վ և ի՞նչպես է պաշտպանելու մեր աշխատանքի խաղաղ պայմանները և Հոկտեմբերի բոլոր նվաճումները միջազգային կապիտալի վոտնձգություններից: Խորհուրդների կազմից, նրանց ակտիվությունից, նրանց նվիրվածությունից կոմունիզմի գործին, նրանց հեռատեսությունից է կախված այն, թե մեր տնտեսական ու կուլտուրական շինարարության բոլոր բնագավառներում առաջիկայում ի՞նչ հաջողություններ կունենանք, ի՞նչ աստիճանի ընդունակ կլինենք բարձրացնելու բանվորի և գյուղացու գոյության մակարդակը և ամրապնդելու պրոլետարական դիկտատուրայի հիմունքները: Մեր աշխատավոր մասսաների քաղաքական գիտակցությունը և նրանց ակտիվությունը տարեց-տա-

119

09 SEP 2013

րի աճում են, աճում են զարմանալի արագությամբ։ Բայց և այնպես նրանց մասնակցությունն ընտրություններին բավարար համարելուց դեռ շատ հեռու լինք։ Իսկ վերընտրությունների ընթացքն արդեն ցույց է տալիս, թե ի՞նչպես են գործելու նորընտիր խորհուրդները և ժողովրդական լայն մասսաները նրանց աշխատանքին ի՞նչ մասնակցություն են հայտնաբերելու, ի՞նչ աջակցություն են ցույց տալու։

Անհրաժեշտ է ձեռք առնել ամեն մի հնարավոր միջոց, որպեսզի վերընտրությունների ընթացիկ կամպանիան իր բովանդակությամբ և իր հետևանքներով ղեկավարների նախորդ բոլոր վերընտրություններին։ Այդ կատարելապես հնարավոր է, որովհետև յերկիրը տնտեսապես անընդհատ առաջադիմում է, որովհետև մեծ արագությամբ աճում է բանվորի և գյուղացու գիտակցությունը, որովհետև տարեց-տարի կազմակերպվում, գիտակցության են գալիս և մեր սոցիալիստական շինարարության գործին ակտիվորեն մասնակցում են ընակչության հետամնաց ու անկազմակերպ խավերը։ Միաժամանակ, մեր այս պահանջի կատարումը հրամայողական անհրաժեշտություն է, որովհետև այդ են մեզ թելադրում մեր առաջ դրած տնտեսական ու կուլտուրական շինարարության մեծ ծրագրերը, այդ են մեզ թելադրում դասակարգային կռվի ուժեղացումը և միջազգային կապիտալի կողմից մեզ սպառնացող վտանգը։

Բանվորական և գյուղացիական մասսաների կազմակերպված շարքերով, նրանց գիտակցությամբ և նրանց ակտիվությամբ է, որ ուժեղ է Խորհրդային Իշխանությունը։ Խորհրդային կարգերի տարբերությունը բուրժուական կարգերից հենց այն է, որ մեզ մոտ աշխատավոր մասսան ինքն է դարձնում իր վիճակը։ Առանց այս պայմանի, մեծամեծ դժվարությունների կհանդիպեն թե՛ մեր շինարարությունը և թե՛ մեր յերկրի պաշտպանությունը։ Առանց այս պայմանի, անհնարին կլինի բյուրոկրատիզմի վերացումը, անհնարին կլինի բանվորական և գյուղացիական նոր ակտիվի առաջքաշումը։ Բյուրոկրատիայի ձեռքով սոցիալիզմ կառուցել չի կարելի։ Բյուրոկրատիան բուրժուական կարգերից ժառանգած ամենավտանգավոր չարիքներից մեկն է, որի վերացման հիմնական միջոցը բանվորական և գյուղացիական մասսաների առաջքաշումն է, նրանց ակտիվ մասնակցությունն է Խորհրդային Իշխանության բոլոր շինարարական աշխատանքներին։

Վերընտրությունների ընթացիկ կամպանիան առանձնապես մեծ նշանակություն է ստանում նրանով, որ կատարվում է մեր տնտեսական վերելքի մի չափազանց կարևոր շրջանում։ Մեր արդյունաբերության հետևողական մեքենայացումը և գյուղատնտեսության կոոպերացումը խորհուրդների առաջ բազմաթիվ դժվար լուծելի խնդիրներ են դնում, միևնույն ժամանակ ավելի սուր կերպարանք են տալիս դասակարգային կռվին, և ավելի յեն ուժեղացնում միջազգային բուրժուազիայի թշնամությունը Խորհրդային Իշխանության նկատմամբ։ Խորհուրդների աշխատանքի ուժեղացումը, բանվորական ու գյուղացիական ակտիվի նոր ու նոր դնդերի առաջքաշումն այն անհրաժեշտ նախադրյալն է, առանց որի անհնարին կլինի թե՛ լիովին լուծելու մեր առաջ դրած բարդ խնդիրները և թե՛ պրոլետարական դիկտատուրայի ներքին ու արտաքին թշնամիներին արժանի պատասխան տալու։

Քաղաքի և գյուղի խորհուրդները պետք է ընդգրկեն բանվորական և գյուղացիական ակտիվի լավագույն տարրերին, իսկ լավագույններին ընտրելու համար անհրաժեշտ է մոտիկից ծանոթանալ նրանց գործերին, անհրաժեշտ է հանդամանորեն քննության առնել նրանց առաջիկա աշխատանքի ծրագիրները։ Ահա ինչու մեր վերընտրությունների հաջողության համար պահանջվում է, որ բանվորների ու գյուղացիների ամենալայն մասսաներն ակտիվ մասնակցություն ունենան հաշվետու կամպանիային և նակազների մշակման գործին։ Այս նախապատրաստական աշխատանքը հաջողությամբ ավարտելուց հետո յե միայն, որ հնարավորություն կլինի վորոշել, թե ո՞վ է արժանի խորհուրդների նոր կազմի մեջ մտնելու։

Գրադարան ՄՈՍԿՎԱ Ռեպոզիտորիում
615-2010

Պրոլետարական դիկտատուրայի կարգերն ամրապընդելու և սոցիալիզմին վերջնական հաղթություն բերելու համար ե, վոր խորհուրդները պայքարում են։ Ահա ինչո՛ւ նրանց կազմում չեն կարող տեղ գտնել վո՛չ միայն սոցիալիզմի թշնամիները, այլ և մարդիկ, վորոնք խորհրդային կարգերին համակրում են, սակայն անընդունակ են ակտիվ մասնակցություն ունենալու Խորհրդային Իշխանության շինարարությանը և նրա մղած պայքարին։

Ընտրվելիք խորհուրդների կազմի մեջ պետք ե անցնեն բացառապես այն բանվորներն ու գյուղացիները, վորոնք սոցիալիզմի համոզված կողմնակիցներ ու պաշտպաններ են, վորոնք ընդունակ են ամեն կերպ նպաստելու մեր արդյունաբերության մեքենայացման, գյուղատնտեսության կոոպերացման, կուլտուրական հեղափոխության ծավալման, պրոլետարական դիկտատուրայի ներքին ու արտաքին թշնամիների ջախջախման գործին։

Վերընտրությունների հաջողությունն այս ուղղությամբ ապահովելու համար՝ անհրաժեշտ ե, վոր խորհուրդներից վերջնականապես վտարվեն տատանվող ու վոչ ակտիվ տարրերը և վոր նրանց կազմում իրենց թվով և իրենց ազդեցությամբ գերիշխող հանդիսանան սոցիալիզմի փորձված ու համոզված մարտիկները, վոր խորհուրդների կազմում ուժեղացվի բանվորների, բատրակների և չքավոր գյուղացիների տոկոսը, վոր խորհուրդներում և խորհուրդներից դուրս ել՝ ավելի ամրապնդվի այն դաշինքը, վոր Հեղափոխության առաջին որից կնքված ե բանվոր դասակարգի ու աշխատավոր գյուղացիության միջև ամբողջ յերկրում, բատրակների, չքավորների և միջակների միջև—գյուղում։

Կո՛վ բյուրոկրատիզմին, կո՛վ մեր տեխնիկական ու կուլտուրական հետամնացությանը, կո՛վ նացիոնալիզմին, կո՛վ կուլակին ու նեպմանին— ահա մեր առաջին անելիքը, վորպեսզի մեր շինարարության ճանապարհին ծառացած դժվարություններն ու արգելքները վերջնականապես վերացվեն։

Սոցիալիստական շինարարության կյանքի բոլոր բնագավառներում և առանձնապես՝ մեր վողջ տնտեսության ինդուստրացում և գյուղատնտեսության կոոպերացում, կոլլեկտիվ տնտեսությունների կազմակերպման մասսայականացում—ահա խորհուրդների գործունեության ընդհանուր ծրագիրը։

Բանվորների, բատրակների, չքավոր գյուղացիների և լավագույն միջակների, ինչպես և խորհրդային ինտելիգենցիայի ակտիվ ու պատրաստված տարրերի առաջքաշում, այդ թվում նաև բանվորուհիների, գեղջկուհիների և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների առաջքաշում—ահա մեր թշնամիներին ջախջախելու և սոցիալիստական շինարարության վերելքն ապահովելու հիմնական միջոցը։

Մեր յերկրի տնտեսական ու կուլտուրական զարգացման արագ տեմպը և բանվորական ու գյուղացիական մասսաների կազմակերպման ասպարեզում կատարած մեծ հաջողությունները լիակատար յերաշխիք են այն բանի, վոր Խորհրդային Իշխանությունն այսուհետև ել նույն հաջողությամբ կջախջախի պրոլետարական դիկտատուրայի թշնամիներին, նույն արագ տեմպով առաջ կտանի յերկրի տնտեսական ու կուլտուրական շինարարության գործը։

Կեցցե՛ բանվորի և գյուղացու դաշինքը։

Կեցցե՛ բանվորական և գյուղացիական մասսաների ձեռքով կատարվող սոցիալիստական շինարարությունը։

Կեցցե՛ պրոլետարական դիկտատուրան։

Կեցցե՛ սոցիալիզմը։

Հ.Ս.Խ.Հ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Նախագահի Տեղակալ՝ Հ. ԱՋԱՏՅԱՆ

Հ.Ս.Խ.Հ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

ՎՈՐՈՇՈՒՄ

ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԳԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

1928 թ. Դեկտեմբերի 8

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության առընթեր 1928 թ. նոյեմբերի 15-ին հրավիրված՝ գավգործկոմների կազմբաժինների վարիչների, գավգործկոմների հրահանգիչների, գավառակային գործկոմների նախագահների, գավկոմների բանվորբաժինների վարիչների, ԼԿՅԵՄ գավառային մարմինների ներկայացուցիչների, խոշոր գյուղխորհուրդների նախագահների խորհրդակցության ընթացքում խորհուրդների վերընտրության կամպանիայի վերաբերյալ հարցերի քննության հիման վրա, Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը ՎՈՐՈՇՈՒՄ Է.—

Արձանագրել, որ 1926–27 թ. ընտրական կամպանիան ընթանալով խորհուրդների աշխուժացման և մասսաներին խորհրդային պետականության և հասարակականության շուրջը համախմբելու լոզունգի տակ, պակվեց հաջողությամբ: Այդ կամպանիայի ընթացքում ամրապնդվեց միջակ և չքավոր գյուղացու դաշինքը, հայտնաբերվեց չքավորության և բատրակության ակտիվությունը, կուլակային չերտերի դեմ մղվող պայքարն ընդունեց կազմակերպված բնույթ, և ապացուցվեց Խորհրդային Իշխանության ուղիների ճշտությունը:

Սակայն այս հիմնական հաջողությունների կողքին Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը անհրաժեշտ է գտնում տեղերի ուշադրությունը հրավիրել անցած ընտրական կամպանիայի հետևյալ թերությունների վրա.—

Ա. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ-ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Գյուղական ընտրական հանձնաժողովները ամենուրեք չեն կազմակերպվել ընտրական հրահանգի հիմունքներով. հանձնաժողովների անդամները նշանակվել են գյուղխորհուրդների կողմից առանց համապատասխան կազմակերպությունների վորոշումների: Ցեղել են դեպքեր, երբ ընտրական հանձնաժողովները ընտրվել են գյուղհասարակական ժողովներում:

2. Ընտրական իրավունք վայելող և ընտրական իրավունքներից զրկված քաղաքացիների ցուցակները կազմվել են անխութորեն և պահվել են ցիր ու ցան վիճակում:

3. Ընտրական իրավունքներից զրկելը կամ ընտրական իրավունքներից զրկված քաղաքացիներին ցուցակներից հանելը կատարվել է ընտրական հանձնաժողովների վոչ-կոլլեկտիվ վորոշմամբ: Նկատվել է նաև, որ վերադաս ընտրական հանձնաժողովները վերականգնելով այս կամ այն քաղաքացիների ընտրական իրավունքները, չեն ստացել ստորադաս ընտրական հանձնաժողովների կարծիքը:

4. Ընտրական իրավունքներից զրկելն ամենուրեք չի կատարվել փաստական տվյալների հիման վրա, վորոնք արդարացի դժգոհությունների առիթ և տվել:

5. Հաշվառման ձևերը խնամքով չեն ուսումնասիրված, վորի հետևանքով հաշվառման գործը տուժել է:

6. Ընտրական ծանուցագրերը հանձնելու գործը չի դրված կանոնավոր հիմքերի վրա, և ծանուցագրերն հանձնվել են գլխավորապես ծխի ներկայացուցիչներին:

7. Նախապատրաստական շրջանում համապատասխան միջոցներ ձեռք չեն առնված ընտրության տեխնիքական հարմարություններ ստեղծելու համար (չենքի, լուսավորության, վառելիքի, նստարանների, սեղանների և այլն):

8. Ընտրական հրահանգն ամենուրեք լայն չափերով չի մասսայականացվել, իսկ գյուղերը մեկնող ընկերները հաճախ ծանոթ չեն յեղել ընտրական հրահանգին: Վորոշ վայրերում ագիտացիոն աշխատանքները խորացած բնույթ չեն կրել:

9. Գյուղերին և գյուղամբերին կցված վերադաս ընտրական հանձնաժողովների անդամների, պա-

տասխանատու ընկերների մասնակցությունը և ղեկավարությունը տեղ-տեղ կրել է պատահական բնույթ, որից տուժել են կազմակերպչական աշխատանքները։

Բ. ՀԱՇՎԵՏՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Գավառային, գավառակային և քաղաքային ընտրական հանձնաժողովներն ընտրական կամպանիայի հաշվետու շրջանի վրա ամենուրեք անհրաժեշտ ուշադրությունը չեն դարձրել, որը բացասական ազդեցություն է ունեցել մասսաներին լայն չափով հաշվետու ժողովներին մասնակից անելու գործի վրա։

2. Առանձնապես թույլ է յեղել կանանց մասնակցությունը հաշվետու ժողովներում, և նրանց ակտիվացման վրա հատուկ ուշադրություն չի դարձվել։

3. Գյուղխորհուրդների հաշվետու զեկուցումներն ամենուրեք չեն կրել բովանդակալից բնույթ, որի հետևանքով մասսաների հետաքրքրությունը մի շարք վայրերում նվազ չափով է արտահայտվել։

4. Գյուղխորհուրդների անդամները հաշվետու չեն յեղել համապատասխան կազմակերպությունների, մասնավորապես ԼԿՅԵՄ, կանանց պատգամավորական ժողովների, չքավորական ժողովների և այլ հասարակական կազմակերպությունների առաջ։

5. Թույլ ուշադրություն է դարձված վորոշ վայրերում ազգային փոքրամասնությունների գյուղերի հաշվետու ժողովների վրա, ինչպես նաև ժամանակին ուժեղ կազմակերպչական միջոցներ ձեռք չեն առնվել թայֆայական գյուղերում հաշվետու ժողովները կանոնավոր հիմքերի վրա դնելու համար։

Գ. ԸՆՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Ընտրություններին լայն չափերով մասնակից չեն դարձված կանայք։

2. Ընտրությունների նախորյակին անհրաժեշտ չափով չեն ոգտագործված չքավորական ժողովները։

3. Ընտրությունների համար ժամանակին չեն պատրաստված չենքեր, վառելիք, լուսավորություն և այլ տեխնիկական հարմարություններ։

4. Ընտրությունները տեղ-տեղ կրել են չտապողական բնույթ, որի հետևանքով ընտրողները, նախ, հնարավորություն չեն ունեցել մանրամասնորեն քննության առնելու հրահանգի հիմունքները և գյուղխորհուրդների անդամության համար առաջադրված անձանց թեկնածությունը։

5. Մի շարք գյուղխորհուրդների կազմի մեջ միջակ գյուղացիները նվազ տեղ են դրավել։ Գյուղխորհուրդների անդամության թեկնածուների հարցը նախորոք համապատասխան կազմակերպությունների նիստերում, չքավորական ժողովներում, կանանց պատգամավորական ժողովներում, ԼԿՅԵՄ և այլ հասարակական կազմակերպություններում քննության չի առնվել։

6. Մի շարք վայրերում գյուղերին և գյուղախմբերին ամրացված ընկերների ղեկավարությունն ընտրությունների շրջանում յեղել է թույլ։

Դ. ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՅԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Գյուղական, գավառակային, գավառային և քաղաքային ընտրական հանձնաժողովները ժամանակին պահանջված ինֆորմացիաները չեն ներկայացրել, որի հետևանքով տուժել է ղեկավարման գործը։

2. Հաշվետու և ընտրական կամպանիայի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվել են մեծ հապաղումներով։ Միաժամանակ անհրաժեշտ խնամքով չեն մշակված յեղել վիճակագրական նյութերը, որի հետևանքով մի շարք սխալներ են սպրդել վիճակագրական տախտակների մեջ։

Ընդգծելով վերոհիշյալ թերությունները, Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահությունն առաջարկում է խորհուրդների առաջիկա ընտրությունների ընթացքում կիրարկել հետևյալ միջոցները.—

1. Առանձին ուշադրություն դարձնել ընտրական կամպանիայի նախապատրաստական-կազմակերպչական շրջանի վրա, լիովին կիրարկելով Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի ընտրական կամպանիայի վերաբերյալ ծրագիրը, մասնավորապես ուշադրություն դարձնելով՝

տասխանատու ընկերների մասնակցությունը և ղեկավարությունը տեղ-տեղ կրել է պատահական բնույթ. վորից տուժել են կազմակերպչական աշխատանքները։

Բ. ՀԱՇՎԵՏՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Գավառային, գավառակային և քաղաքային ընտրական հանձնաժողովներն ընտրական կամպանիայի հաշվետու շրջանի վրա ամենուրեք անհրաժեշտ ուշադրությունը չեն դարձրել, վորը բացասական ազդեցություն է ունեցել մասսաներին լայն չափով հաշվետու ժողովներին մասնակից անելու գործի վրա։

2. Առանձնապես թույլ է յեղել կանանց մասնակցությունը հաշվետու ժողովներում, և նրանց ակտիվացման վրա հատուկ ուշադրություն չի դարձվել։

3. Գյուղխորհուրդների հաշվետու զեկուցումներն ամենուրեք չեն կրել բովանդակալից բնույթ, վորի հետևանքով մասսաների հետաքրքրությունը մի շարք վայրերում նվազ չափով է արտահայտվել։

4. Գյուղխորհուրդների անդամները հաշվետու չեն յեղել համապատասխան կազմակերպությունների, մասնավորապես ԼԿՅԵՄ, կանանց պատգամավորական ժողովների, չքավորական ժողովների և այլ հասարակական կազմակերպությունների առաջ։

5. Թույլ ուշադրություն է դարձված վորոշ վայրերում ազգային փոքրամասնությունների գյուղերի հաշվետու ժողովների վրա, ինչպես նաև ժամանակին ուժեղ կազմակերպչական միջոցներ ձեռք չեն առնվել թայֆայական գյուղերում հաշվետու ժողովները կանոնավոր հիմքերի վրա դնելու համար։

Գ. ԸՆՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Ընտրություններին լայն չափերով մասնակից չեն դարձված կանայք։

2. Ընտրությունների նախորյակին անհրաժեշտ չափով չեն ոգտագործված չքավորական ժողովները։

3. Ընտրությունների համար ժամանակին չեն պատրաստված չենքեր, վառելիք, լուսավորություն և այլ տեխնիկական հարմարություններ։

4. Ընտրությունները տեղ-տեղ կրել են չտապողական բնույթ, վորի հետևանքով ընտրողները, նախ, հնարավորություն չեն ունեցել մանրամասնորեն քննության առնելու հրահանգի հիմունքները և գյուղխորհուրդների անդամության համար առաջադրված անձանց թեկնածությունը։

5. Մի շարք գյուղխորհուրդների կազմի մեջ միջակ գյուղացիները նվազ տեղ են գրավել։ Գյուղխորհուրդների անդամության թեկնածուների հարցը նախորոք համապատասխան կազմակերպությունների նիստերում, չքավորական ժողովներում, կանանց պատգամավորական ժողովներում, ԼԿՅԵՄ և այլ հասարակական կազմակերպություններում քննության չի առնվել։

6. Մի շարք վայրերում գյուղերին և գյուղամբերին ամրացված ընկերների ղեկավարությունն ընտրությունների շրջանում յեղել է թույլ։

Դ. ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՅԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Գյուղական, գավառակային, գավառային և քաղաքային ընտրական հանձնաժողովները ժամանակին պահանջված ինֆորմացիաները չեն ներկայացրել, վորի հետևանքով տուժել է ղեկավարման գործը։

2. Հաշվետու և ընտրական կամպանիայի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվել են մեծ հապաղումներով։ Միաժամանակ անհրաժեշտ խնամքով չեն մշակված յեղել վիճակագրական նյութերը, վորի հետևանքով մի շարք սխալներ են սպրդել վիճակագրական տախտակների մեջ։

Ընդգծելով վերոհիշյալ թերությունները, Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահությունն առաջարկում է խորհուրդների առաջիկա ընտրությունների ընթացքում կիրարկել հետևյալ միջոցները.—

1. Առանձին ուշադրություն դարձնել ընտրական կամպանիայի նախապատրաստական-կազմակերպչական շրջանի վրա, լիովին կիրարկելով Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի ընտրական կամպանիայի վերաբերյալ ծրագիրը, մասնավորապես ուշադրություն դարձնելով՝

ա) ընտրական իրավունք վայելողների և ընտրական իրավունքներից զրկված քաղաքացիների ցուցակները կազմել մեծ խնամքով, վորպեսզի չահագործող տարրերը վոչ մի դեպքում տեղ չգտնեն խորհուրդների մեջ հսկել, վոր ընտրական իրավունքից զրկելը կատարվի բացառապես փաստական տվյալների հիման վրա.

բ) ուշադրություն դարձնել ընտրական հանձնաժողովների աշխատանքների որինականության վրա.

գ) լայն չափով մասսայականացնել ընտրական հրահանգը և այդ ուղղությամբ բացատրական կամպանիան մղել ընտրական հրահանգին ծանոթ ընկերների միջոցով.

դ) ժամանակին պատրաստել ընտրական ծանուցագրեր, հատուկ ուշադրություն դարձնելով նրանց հանձնման գործը կազմակերպելու վրա, այդ աշխատանքներին մասնակից դարձնելով գյուղի աշակերտության, պիոներների, կանանց պատգամավորական ժողովների անդամների և այլն.

ե) ուշադրություն դարձնել ընտրական հանձնաժողովների գործերի տեխնիկական կողմի վրա, անցյալում նկատված թերություններից խուսափելու համար.

զ) ընտրությունների վերաբերյալ խորհրդակցություններին տալ գործնական բնույթ և այդ խորհրդակցությունների ժամանակ ու հետագա աշխատանքների ընթացքում լայն չափով ոգտագործել գյուղի չքավորությանը, բատրակներին, գյուղական աշխատավոր ինտելլիգենցիային (ուսուցիչներին, գյուղատնտեսներին, բժիշկներին և այլն:

2. Մեծ նշանակություն տալով վերոնշյալ կամպանիայի հաջվետու չրջանին, անհրաժեշտ է բոլոր հնարավոր կազմակերպչական միջոցները ձեռք առնել բանվորական և աշխատավոր գյուղացիական մասսաներին հաջվետու կամպանիայի ասպարեզ գրավելու համար, մասնավորապես ուշադրություն դարձնելով հետևյալ հարցերի վրա.

ա) ընտրողին հնարավորություն տալ լայն չափով և բազմակողմանի քննադատելու խորհուրդների գործունեությունը, հայտնաբերելով թերությունները, դասակարգային դծի խախտումները, բյուրոկրատիզմը և քաշքշուկը, վորոնք դեռ գոյություն ունեն խորհուրդներում.

բ) գյուղական և քաղաքային խորհուրդների ընդհանուր հաջվետու դեկուցումներին զուգընթաց գյուղի հասարակական կազմակերպություններում, քաղաքի ձեռնարկություններում, հիմնարկություններում, կարմիր բանակի մասերում, խորհրդային տնտեսություններում, կոլլեկտիվ տնտեսություններում և այլն լսել նաև առանձին պատգամավորների դեկուցումներն իրենց գործունեության մասին.

գ) մեծ ուշադրություն դարձնել, վորպեսզի հաջվետու կամպանիային մասնակից դարձվեն գյուղի չքավորությունը, բատրակները, ինչպես նաև կանանց լայն մասսաները.

դ) հաջվետու ժողովներում լայն քննության առարկա դարձնել հրահանգի սկզբունքները.

ե) հաջվետու կամպանիան տեղերում մղել վերադաս ընտրական հանձնաժողովների անդամների և ամբացված պատասխանատու ընկերների ղեկավարությամբ:

3. Միջոցներ ձեռք առնել, վորպեսզի ընտրությունները սկսվեն և ավարտվեն սահմանված ժամկետում:

4. Ուժեղացնելով գյուղական խորհուրդներում բատրակների, չքավորության, կոլլեկտիվ տնտեսության անդամների և այլ հայլ տարրերի ղերը, միաժամանակ համապատասխան քանակությամբ տեղ հատկացնել գյուղական ինտելլիգենցիային (ուսուցիչներին, գյուղատնտեսներին և այլն) և ձեռք առնել ամեն մի հնարավոր միջոց, վորպեսզի վոչ մի դեպքում տուժած չլինեն միջակի շահերը:

5. Անհրաժեշտ ուշադրություն դարձնել խորհուրդների թեկնածուական ցուցակներ կազմելու վրա և այդ ցուցակները նախորոք քննության առնել չքավորական ժողովներում և այլ հասարակական կազմակերպություններում:

6. Կանանց առաջ քաշել վոչ միայն գյուղխորհուրդներում, քաղխորհուրդներում, այլ նաև ղեկավար խորհրդային աշխատանքներում, գյուղխորհուրդի նախագահներ, գավառային և գավառակային գործկոմի նախագահության անդամ և նախագահ, հրահանգիչներ, բաժնի վարիչներ և այլն: Ձեռք առնել ամեն մի հնարավոր միջոց, վորպեսզի կանանց մասնակցությունն ընտրություններին հասնի վոչ պակաս, քան 25 տոկոս գյուղում և 50 տոկոս քաղաքում, իսկ խորհուրդների կազմում վոչ պակաս քան 15 տոկոս գյուղում և 20 տոկոս քաղաքում:

7. Ուժեղացնել աշխատանքն ազգային փոքրամասնությունների մեջ, ապահովելով նրանց լիակատար ներկայացուցչությունը գյուղի և քաղաքի բոլոր խորհուրդներում:

8. Գյուղխորհուրդների ընտրության ժամանակ ամրացնել գյուղի պրոլետարիատի և չքավորության կապը միջակների հետ, հիմնական նպատակ դարձնելով գյուղի կուլակության չեզոքացումը:

9. Քաղխորհուրդներում անդամության թեկնածուների ցանկը կազմելիս ապահովել բանվորական միջուկը, միաժամանակ համապատասխան քանակությամբ տեղ հատկացնելով խորհրդային ինտելիգենցիային, մասնավորապես տեխնիկական ինտելիգենցիային, վորոնք կապված են արտադրության բանվորական մասսաների հետ:

10. Ուժեղացնել և սիստեմատիկ դարձնել հասարակական կազմակերպությունների առանձնապես արհեստակցական միությունների և կոոպերատիվ մարմինների, ինչպես նաև ժողովրդական կոմիսարիատների մասնակցությունն ընտրական կամպանիային:

11. Ընտրական ժողովներում քննվելիք նակազները բղխեցնել գյուղի, քաղաքի հնարավորություններից և ֆինանսական միջոցներից՝ ամեն մի առաջարկ կապելով մեր ընդհանուր տնտեսական քաղաքականության և Խորհրդային Իշխանության տրամադրության տակ եղած նյութական հնարավորությունների հետ:

12. Վերընտրությունների շուրջը տարվող ագիտացիոն և պրոպագանդիստական աշխատանքում առաջնակարգ տեղ տալ յերկրի վողջ տնտեսության ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման ու կոոպերացման խնդիրներին:

13. Ամենալայն չափով ոգտագործել այս տվյալները, վորոնք վերաբերում են Խորհրդային Իշխանության նվաճումներին կյանքի բոլոր բնագավառներում, միևնույն ժամանակ անխնա պայքար մղելով մեր աշխատանքի բոլոր բացերի և թերությունների դեմ, կանգ առնելով առանձնապես բյուրոկրատիզմի վտանգի վրա և նրա վերացման հաջողությունն ապահովելու համար հեռացնել խորհրդային աշխատանքից անուղղելի բյուրոկրատներին և վերընտրությունների ընթացքում առաջ քաշել ավելի գիտակից, բարեխիղճ ու ակտիվ բանվորների ու գյուղացիների նոր կադրեր: Բանվորական և գյուղացիական ակտիվի հաշվառման և ուսումնասիրության հարցը մտցնել քաղաքի և գյուղի խորհուրդների գործունեության ծրագրի մեջ և նրանց մշտական հոգատարության ամենակարևոր առարկաներից մեկը համարել:

14. Միջազգային բուրժուազիայի կողմից Խորհրդային Միության սպառնացող վտանգը նկատի առնելով, բանվորական և գյուղացիական ամենալայն մասսաների ուշադրությունը բևեռել այն խնդրի վրա, վոր մեր տնտեսական և կուլտուրական շինարարության խաղաղ ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ է գարկ տալ յերկրի պաշտպանության գործին, մեր հասուկ խնամքի առարկա դարձնել Կարմիր բանակը, ոգնելով կարմիր բանակայինների կարիքավոր ընտանիքներին և ամեն կերպ ուժեղացնելով պաշտպանության աջակցությունը և ՊԱՋԸ–Ավիաքիմի ընկերությունը (ОСО Авиохим)

մանելով նրա չարքերը և վարժվելով ռազմական գործում։

15· Վերընտրական ամբողջ կամպանիայի ընթացքում ոգտագործել ամեն մի հնարավորություն, որպեսզի ել ավելի ամրապնդվեն բանվոր դասակարգի դիրքերը, որպեսզի ել ավելի զարկ տրվի բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ուժեղացման գործին, որպեսզի աշխատավոր մասսաների չարքերում ել ավելի բարձրանա խորհրդի և նրա անդամների վարկը։

16· Վերընտրական ամբողջ կամպանիան այնպես տանել, որ քաղաքի և գյուղի հակախորհրդային տարրերի դեմ բանվորությունը և աշխատավոր գյուղացիության բոլոր խավերը դուրս գան մի ընդհանուր ճակատով և անհնարին դարձնեն նրանց ամեն մի վոտնձգություն՝ խանգարելու վերընտրությունների գործը և աշխատավորության հետամնաց ու անկազմակերպ խավերին իրենց ազդեցությանը յենթարկելու։

17· Անթույլատրելի համարել հակախորհրդային տարրերի ուժերի թերագնահատումը, ինչպես և այն ուժերի գերագնահատումը։ Վերընտրական ամբողջ կամպանիային տալ հարձակողական բնույթ, ղեկավար աշխատանքից անմիջապես հեռացնելով այն բոլորին, ովքեր կփորձեն պաշտպանողական դիրքեր մտնել և դրանով Խորհրդային Իշխանության թշնամիների առաջ կազմակերպված ուղիներ կը բացեն նրանց համար հակահեղափոխական գործունեություն և խորհրդային կարգերի դեմ ուղղած հարձակման հնարավորություն կստեղծեն։

18· Վերընտրության ամբողջ պրոցեսսն անցկացնել ինքնաքննադատության և խորհրդային դեմոկրատիայի նշանի տակ։

19· Վերընտրական բոլոր աշխատանքներում և նրանց վերաբերյալ բոլոր զեկուցումներում վերացնել ամեն մի ձևականություն, ամեն մի ինքնագոհություն, ամեն մի չափազանցում՝ աշխատանքի հաջողության խնդիրներին մոտենալով վո՛չ միայն քանակի, այլ և վորակի տեսակետից։

20· Վերընտրությունների հաջողության չափանիշ համարել բանվորական և գյուղացիական մասսաների ինքնագործունեության աճման աստիճանը և բանվորական ու գյուղացիական ակտիվի չքմանների ընդլայնումը։

ՀՍՍՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Նախագահի Տեղակալ՝ Հ. ԱԶԱՏՅԱՆ

ՀՍՍՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

պատ. № 1138 ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 1627 (Բ)
ՏԻՐԱԺ—3500
ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ I ԻՆ ՏՊԱՐԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0220454

154.

35. 656